

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Վ.ԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՈՒԹՍՈՒՆԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՄԵԾԱՅԱՐԳ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵՐԱՐ ՏԻԱՐ ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ
ՅԿԵԱՆՍ ՆԱԽԱԳԱՀ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ
ՀԱՐԱԶԱՏ ՈՐԴՈՅ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ
ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Փարիզ

Վաստակաշատ Տիար Նախագահ,

Ամենայն Հայոց Սուրբ Էջմիածնից ուրախ սրտով ողջունում ենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան համագումարը ի լոյս քաղաք Փարիզ, նուիրուած նրա հիմնադրման պանծալի ութսունամեակին:

Նեղոսի ափերին 1906 թուականին ծնունդ առած Բարեգործական Հայկական ձեր կազմակերպութիւնը ութսուն տարիներ շարունակ հայոց ազգային կեանքի ծոցում մնացել է հաստատ ու աներեր, առատօրէն բարոյական և նիւթական բարիք բաշխելով մեր մայր Եկեղեցուն, ի սփիւռս աշխարհի հայկական կրթական հաստատութիւններին, ազգաշէն հայրենասիրական ձեռնարկներին, մշակութային իրագործումներին, միշտ և ամենուր շինարար եռանդ, կենսունակութեան ոգի և հայօրէն գոյատևելու հաւատք ներարկելով պանդուխտ հայութեան բաբախող սրտին:

Մեր ազգային պատմութիւնը ոսկեայ տառերով պիտի հիւսի գովքը Հ. Բ. Ը. Միութեան, երախտապարտ զգացումներով տոգորուած՝ մեծանուն հիմնադիրների և անցնող ութսուն տարիների ընթացքում ղեկավար անձնաւորութիւնների նկատմամբ:

Ոսկեայ տառերով պիտի արձանագրուի նաև Ձեր անունը արդար և համբաւը Ձեր վաստակին, իբրև աւելի քան երեսուն տարիների բազմաշնորհ նա-

խագահը, հայոց մեծ Միութեան, Ձեզ յատուկ բարոյական հեղինակութեամբ ու իմացական տաղանդով, հայ մարդու պայծառ տեսիլքներով ներշնչուած:

Այսու Մեր կոնդակով օրհնում ենք ութսուն տարիների ապգանուէր վաստակը Հ. Բ. Ը. Միութեան, և ի սրտէ մաղթում որ Ձեր սքանչելագործ ղեկավարութեան ներքոյ, նա շարունակի իր առաքելութեան փառաւորեալ ուղին՝ անհատնում տարիներ, ի մխիթարութիւն համայն մեր ժողովրդեան որ ի Հայաստան և որ ի սփիւռս աշխարհի:

Մաղթում ենք մանաւանդ որ մարդասէրն Աստուած իր խաղաղարար Սուրբ Հոգին իջեցնի մեր օրերի տագնապահար մարդկութեան վրայ, որպէսզի խաղաղութեան ու արդարութեան արևի ներքոյ ձեր հայանուէր կամակերպութիւնը մշտապէս ծառայի իր ազնիւ իտէալների իրագործմանը:

Պատիւ և օրհնութիւն Հ. Բ. Ը. Միութեան:

Պատիւ և օրհնութիւն Ձեզ, մեծարգոյ Տիար Նախագահ և Ձեր Կենտրոնական Վարչութեան գործընկերներին ու Միութեանդ բոլոր մասնաճիւղերի ազնուասիրտ ղեկավարներին և բարեսէր անդամներին:

«Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առաւել լերուք ի գործս Տեառն յամենայն ժամ. գիտասջիք զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58): Ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 20 Նոյեմբերի
1986 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԵ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1468